ինձ, եւ ոչ եկն։ Ոչինչ է կամիլն մեր զնա եթէ ոչ միայն զայն քարտէզն զոր տուաք երկոցունց առ ի Հասանիլ ի օլանտայ ի ձեռն Յօհան Աղային, զոր զնա ոչ եմ տեսեալ եւ ոչ գիտեմ որով հաւատով վարի. բայց միայն օգնելոյ նոցա զայն հնարեցաք, իցէ թէ օգնութիւն ինչ հասցէ նոցա ի նմանէ. սակայն ոչ եհաս քարտէզն նոյն անձին, պարտ է յետս դառնալ ինձ նոյն քարտեղն։ Ուրեմն վաղվաղակի հասուսցէ ինձ որպէս ինքն խոստացաւ առ ի բերել ինձ. նաեւ դիտաւորութիւն իմ ընդ նմա գալ առ ձեզ՝ եւ բերել ձեռամբ իմով զՍրբազնասուրբ Նշխարհն Սրբոյ Հօրն մերոյ Լուսաւորչի։ Ողջ լերուք ի Տէր հանդերձ ընդ ձեզ եղելոց։ Ըստ ամենայնի անարժան

Ի Հռոմ գրեցաւ յամի Տեառն
1766 յօգոստոսի 1։

Յակոբոս մեսրոպ քեահեայ
Արապեան Արքեպս. Լամբրօնի։

Ըստ երեւութին՝ Ս.ծաւոր Վ.ին խնդրանօք խոստացուածը պատրաստուած, բայց կատարուած չէ. վասն զի անյիշատակ ժամանակներէ ի վեր Նոյն Ս Նշխարն իրենց քով չի գտնուիր։ Կը գտնուի միայն (Դիւ. Անտ.) Նոյն Նշխարին լատիներէն վկայականը, տրուած 22 Փետր. 1747ին ի Հռոմ, զոր ստորագրած եւ կնքած է Սիլվէստէր, Եպս. Պորփիւրիոյ, Վատիկանայ Ս. Նշխարաց Ժողովոյն Գահերէցն, յենլով իրմէ յառաջ Հռոմայ Փոխանորդ Կարդինալին տուած վկայականին վրայ, եւ կը ծանուցանէ, որ Նոյնը վաւերական է եւ կընայ անձնապէս, կամ եկեղեցւոյ մէջ հրապարակաւ յարգուիլ։ Ահաւասիկ լատին բնագիրը.